

«Մարդը բռնեց մի չարթ (կա-
չաղակ):

—Ասա՛ մորի.

Արի գլուխս քորի:

—Ասա՛ մարագ.

«Ես սեր ուտեմ, դու կարագ:

—Ասա՛ տասը.

«Ուտեմ թանով սպասը:

—Ասա՛ քսան.

Պապը գնաց Խորասան:

—Ասա՛ իրեք.

«Երեսիդ քաշեմ սիրէզ:

—Ասա՛ խոզ.

«Ճակատիդ դնեմ ինի պոզ:

—Ասա՛ դուռը.

«Դու շլոր կեր, ես նուռը:

Ասա՛ սապուն.

«Ես քեզ դնեմ հաւարուն:

—Ասա՛ ձեռքինս դնակ ա.

«Ինչ որ ասեմ հանաք ա:

—Ասա՛ չիւթն ու կիւթան ճա-
լումն ա.

«Հարսն ու աղջիկ Ուզուլթան-
լումն ա:

ԱՐԱԳԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Ա.

Ուզուն թալալ.

1

Աւլն ըլաւ ուռի ծառը,
Ուլ պոչովը ուռ յոլորեց.
Ուռի պէս յոլորած ուռով
Ուլ ձեռովը դիւռ յոլորեց:

2

Ծօի հուտի հիտը ծուռ:

3

Ըստեղ նօթատուհ,
Ընտեղ ձիթատուհ,
Ձալ ծտին չալ ծտահուտ:

4

Սեռն ի վեր գնամ, սերն ուտեմ,
Ցւնն ի վեր գնամ, սէրն ուտեմ:

5

Փոկակապ Ակոփ ապի,
Ինձ համար մի փոկ կապի,
Ես քէ ասեմ փոկակապ Ակոփ ապի:

6

Եզդի սալսկալ թնփն չնփի:

Բ.

Էրդալինն (Դարալաղեազ).

1

Էրկրթէ Էրդսկալ:

2

Ձուկը մուկը մէկ տապակ,
Ձուկը ուտեմ մուկը թալեմ:

Գ.

Ուրիա Նորաշէն (Ջաբուր).
Տանձ գլղեօրեմ, տանձ ուտեմ,
Բողկ գլղեօրեմ տանձ ուտեմ:

Դ.

Ջամախի.
Ճորին էնա ճրին ձորում,
Հնչ ճորատէր, հաչ ջրատէր,
Ճորուն ճիւլը ճուռել ա:

Ե.

Ալէ քսանդրապօլ.

1

Մեր դուռը կայ բանցր, բանցր,
Ծանդր ծանդր տանձի ծառ,
Ձեր դուռն էլ կնչ բանցր, բանցր
Ծանդր ծանդր տանձի ծառ:

2

Բեռի, ալի (էլի, (կրկին) առ ադ
ալըրէն:

3

Թըրըփ, թըրըփ, փէտի փեթակ
Դըմկի դանակ:

Ա Ղ Օ Ք Զ Ն Ե Ր

Ա.

Վախ բռնելու աղօթք Էրդափինում (Գարալազեհազ).

Որդի դարալարզիկ,

Հէր կիկաս, Հէր կիվանաս.

Ասաց, կլամ, կվանամ,

Գիշերուայ գիշութենէն,

Ցերեկուայ փորձութենէն:

Ասաց, մի լա, մի վաննա,

Ձը դու խովիւ ես Քրիստոսին,

Գնա եկեղեցին, զիրեն

Ջինջիլ դիր վիշնը գողուն,

Կասպա ձեռնը դեռն,

Անօրէն ետն պատին

Թամբը զօձուն:

Ձուր գաչ բարի լուս Քրիստոսին:

Քրիստոսի գալուս,

Ձար խափանոս,

Խկեղեցի պախպանեցի,

Որ պախանցիլ տէրնը խաչին,

Կուսը չերին

Գերեզմանը Քրիստոսին,

Ս'եռած մարմինը մութը գիշերին,

Դուռը բացինք անմահութենին,

Մեր Տէրն էրէւէցաւ,

Ձէն տունց չորս կողմը ցաւ,

Ձորս կողմը աշխարհ թնդաց.

Որն արդար էր՝ դա խնդաց,

Որ մեղաւոր, քուռա (քանդ ուռ)
դողաց.

Մարիամ չաքաւ վրը ուր ծնկան,

Արցունքով դուր ծունկ լուաց,

Ասաց, Տէր, մի տանիլ մեղաւորս
մեղաց,

Քու չաւազան ա մկրտած,

Քու խաչին ա դիպուցած: